ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2022

# ՆԱԽԱԲԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀՊԱՆԵԼ Է ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐՈՒՄ՝ ՄՇՏԱՊԵՍ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՎ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐ: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ՝ IRI-Ի՝ ՀՈՒՆԻՍԻՆ ԱՆՑԿԱՑՐԱԾ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԵԼ Է ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲՅՈՒՐԸ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՌ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԵՎ «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱԳՐԱՎԻՉ 40 ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ:













# ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ








ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԵՐԿՈՒ ԾԱՎԱԼՈՒՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆ, ՀԵՌԱՐՁԱԿԵԼ Է ՄՈՏ 50 ԱՆՈՒՆ ԲԱԶՄԱԺԱՆՐ ՀԱՂՈՐԴՈՒՄ, ՈՐՈՆՑ ՄՈՏ 65 ՏՈԿՈՍՆ ԱՐՏԱԴՐՎԵԼ Է ՀԵՆՑ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՎ 35 ՏՈԿՈՍՆ ԱՐՏԱՊԱՏՎԻՐԱԿՎԵԼ Է:

ՀԵՌԱՐՁԱԿՎԵԼ Է ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ «ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ» ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾԻ 2-ՐԴ ԵԹԵՐԱՇՐՋԱՆԸ, ՈՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ ԵՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ:

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾԵՐ Է ՆԿԱՐԱՀԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ՝ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ «ՖԵԼԱԳԱՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ» ԵՎ ԿԱՐԻԲՅԱՆ ԾՈՎՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԻ ԳԱՆՁԵՐԸ ՓՆՏՐՈՂ «ԾՈՎԸ՝ ՀԱՅԵՐԵՆ» ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ:

ՓՈՔՐԻԿ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԻՆԸ ՆԿԱՐԱՀԱՆԵԼ Է «4 ԵՐԱԶԱՆՔ» ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ Է ԿՐԿՆՕՐԻՆԱԿԵԼ «ԴԵ, ՍՊԱՍԻ՛Ր» ՍԻՐՎԱԾ ՄՈՒԼՏՖԻԼՄԸ:





# ՄԱՐԶԱԿԱՆ 2022





2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՑ ՀԱՆՐԱՅԻՆԻ ԵԹԵՐ Է ՎԵՐԱԴԱՐՁԵԼ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԽԱՂԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ:** ԱՅՍՊԻՍՈՎ, ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՍՓՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԸ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԴԱԴԱՐԻՑ ՀԵՏՈ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՄԵՐ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ:

**ՀԱՆՐԱՅԻՆԸ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԵՌԱՐՁԱԿԵԼ Է «ՖԻՖԱ 2022. ՖՈՒՏԲՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ»**, ՈՐԻ ԽԱՂԵՐԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԳՐԱՎԵԼ Է ՆԱԵՎ ՀՐԱՎԻՐՅԱԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ: ՄԻԱԺԱՄԱՆԱԿ, ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՑՈՒՑԱԴՐՎԵԼ ԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔՈՎ: ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՆՐԱՅԻՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՆԵՐԸ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՆ ՀԵՆՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿՐԻՑ: ԷԴՈՒԱՐԴ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՐՄԵՆ ԳԱՐԱՄՅԱՆԸ ՎԵՐՋԻՆ **ԽԱՂԵՐԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԵՆ ԿԱՏԱՐԻ ՏԱՐԲԵՐ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻՑ՝ ՄԱՐԶԱՍԵՐՆԵՐԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՎ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՏՈՆԻ ԱՄԲՈՂՋ ԷՆԵՐԳԻԱՆ:**

ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ԵԹԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԷՐ «ՊԵԿԻՆ 2022» ՁՄԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՄԲ:

ՀԱՆՐԱՅԻՆԸ ՀԵՌԱՐՁԱԿԵԼ Է «ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2022»-Ը ԵՎ «ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ 2022»-Ը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԻՄՆ ԱՊԱՀՈՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ «ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ» ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ:





# ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022





ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022»-ի ՊԱՏՎԻՐԱԿԻՆ ԸՆՏՐԵԼԻՍ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵԼ Է ՈՉ ԱՅՆՔԱՆ ՀԱՅՏՆԻ ԱՐՏԻՍՏԻ՝ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅՍ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՄԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՏԱՂԱՆԴՆԵՐ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՀԱՐԹԱԿ:

ՌՈԶԱ ԼԻՆԻ «SNAP» ԵՐԳԸ ՄՐՑՈՒՅԹԻՑ ԱՄԻՍՆԵՐ ԱՆՑ ԴԱՐՁԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻԹ՝ ԳՐԱՆՑԵԼՈՎ ՄԻ ՇԱՐՔ ՌԵԿՈՐԴՆԵՐ: ԱՅՆ ՃԱՆԱՉՎԵԼ Է «ԵՎՐԱՏԵՍԻԼԻ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ 2-ՐԴ ԱՄԵՆԱԼՍՎԱԾ ԵՐԳԸ SPOTIFY-ՈՒՄ: ԵՐԳԸ ՍՏԱՑԵԼ Է ՊԼԱՏԻՆԵ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ:





# ՅՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 20-ՐԴ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԸ»՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ






«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2021»-ՈՒՄ ՄԱԼԵՆԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022»-Ը: ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ՝ ՈՐՊԵՍ ՄՐՑՈՒՅԹԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՀԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏՊԱՎՈՐԻՉ ԵՎ ՄԵԾԱՄԱՍՇՏԱԲ ՇՈՈՒ ԷՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ՝ ՏՈՆԵԼՈՒ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԻ» 20-ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԸ: ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԷՐ ՈՐԱԿՅԱԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ԱՐՏԵՐԿՐԻՑ, ՎԱՐՁԱԿԱԼԵԼ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՏԵԽՆԻԿԱ:

«ԵՎՐԱՏԵՍԻԼՅԱՆ ՇԱԲԱԹՎԱ» ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԵԼ Է ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ, ՈՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ ՀԱԶԱՐԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐ: ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ ՎԱՌԵԼ ԵՆ ՀԵՆՑ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԻ» 16 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՈՐԻՆ ՀԱՋՈՐԴԵԼ Է ՏՈՆԱԿԱՆ ՄՅՈՒԶԻՔԼ ԵՎ ՀԱՄԵՐԳ՝ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՂԹԱԾ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ:

ՄԵՐ ԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԽՈՀԱՆՈՑՆ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ, ՈՐՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՅՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՆԿԱՐԱՀԱՆՎԵԼ Է՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՅՑԵՔԱՐՏ:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԸ» ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐ ՄԱՍՇՏԱԲՆԵՐՈՎ ԵՂԵԼ Է ԱՆՆԱԽԱԴԵՊ: ՇՈՈՒԻ ՀԱՋՈՂՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԵԼ ԵՆ ՆԱԵՎ ԵՎՐՈՊԱՑԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ:

ՇԱՏ ԳՈՀ ԵՆՔ ՈՒ ՇԱՏ ԲԱՐՁՐ ԵՆՔ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ: ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԵՍ ՊԱՐԶԱՊԵՍ ԱՊՇԱԾ ԷԻ` ՏԵՍՆԵԼՈՎ ՑՈՒՑԱԴՐՎԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՆ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԸ, ՈՐՈՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՄԵՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ԱՅՍ ԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻՆ, ԱՆԳԱՄ ՈՐՈՇ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ,- ՆՇԵԼ Է «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼԻ» ԳՈՐԾԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՏԻՆ ՕՍԹԵՐԴԱԼԸ:

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑՈՎ ՈՒՂԻՂ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆԸ ՀԵՏԵՎԵԼ Է 33 ՄԼՆ ՄԱՐԴ: ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ՄԻ ՇԱՐՔ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ` ԱՌՑԱՆՑ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ, ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԱՅԼՆ:





# ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ 24/7 ՌԵԺԻՄՈՎ









ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԻՆ 24/7 ՌԵԺԻՄՈՎ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
«ՍՈՒՐՄԱԼՈՒ» ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԵՎ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՕՐԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔՆ ԱՇԽԱՏԵԼ Է ԱՐՏԱԿԱՐԳ ՌԵԺԻՄՈՎ՝
ՈՒՂԻՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻՑ:





# ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ









ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼ Է ՄՐՑՈՒՆԱԿ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ «ԿՐԿՆՕՐԻՆԱԿՈՒՄ», «ՀԵՏԿԱԴՐԱՅԻՆ ՁԱՅՆ», «ՀԵՌՈՒՍՏԱՌԵԺԻՍՈՒՐԱ», ԱՐԴԵՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ՝ «ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ:

ԱՐՑԱԽՈՒՄ ԱՎԱՐՏՎԵԼ Է ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑԸ, ՈՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԻՆՉՊԵՍ ՍԿՍՆԱԿ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ: ՄԻՆՉԵՎ ԱՅՍ ՊԱՀԸ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՎԱՐՏԵԼ ԵՆ 218 ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՏԱՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ:

# ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ












ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ: ՀԱՆՐԱՅԻՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՌՅԱՆՑ ՁԵՎԱՉԱՓՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԿԱՆՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ «MIPCOM» ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄԱՐԿԵՏԻՆ: ԱՅՆ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇՈՒԿԱՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՈՐՆ ՈՒՆԵՆՈՒՄ Է ՄՈՏ 15 ՀԱԶԱՐ ԱՅՑԵԼՈՒ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻՑ:

ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ Է ՆԱԵՎ «ԴԻՍԿՈՊ ԴՈՒԲԱՅ» ՄԱՐԿԵՏԻՆ, ՈՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՎ ՁԵՌՔ ԵՆ ԲԵՐՎԵԼ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ՀԱՆՐԱՅԻՆԻ ԱՐՏԱԴՐԱԾ «ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ» ՀԵՌՈՒՍՏԱՆՈՎԵԼԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԴԱՐՁԵԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ KCTS 9-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՆԹԱԳՐԵՐՈՎ: KCTS 9-Ը ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է, ԵՎ ԴԱՍԱԿԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷԿՐԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՏՆՎԵԼ Է «WORLD TV SERIES» ԲԱԺՆՈՒՄ՝ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ, ԲԵԼԳԻԱԿԱՆ, ԻՏԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ:



# «ԱԴԱՄՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ՝ 2022 Թ. ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ը՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐԸ, ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՆՇՎԵԼ Է ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՕՐ:

ԱՅԴ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է ՆԱԵՎ «ԱԴԱՄՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՆ ԱՄԵՆ ՏԱՐԻ ԿՊԱՐԳԵՎԱՏՐԻ ՈԼՈՐՏԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՆ ՈՒ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ:



# ՍՓՅՈՒՌՔ



ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼ Է ԱՌԱՋԻՆԻ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԱԼԻՔԻ ԵԹԵՐԱՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԱՌԱՎԵԼ ՈՐԱԿՅԱԼ ԵՎ ԲԱԶՄԱԺԱՆՐ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ:

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԱՊՐՈՂ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՑ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՀԱՆՐԱՅԻՆԻ ԴԵՍՊԱՆՆԵՐ» ՆԱԽԱԳԻԾԸ: ՀԱՆՐԱՅԻՆՆ ԱՅԺՄ ՈՒՆԻ 10 ԴԵՍՊԱՆ 8 ԵՐԿՐՈՒՄ:





# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ





ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ԹՎԱՅՆԱՑՆԵԼ ԵՎ ՀԱՄԱԼՐԵԼ ՈՍԿԵ ՖՈՆԴԸ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՆԿԱՐԱՀԱՆՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՈՒ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՎ: 2022ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐԽԻՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ`

ԹՎԱՅՆԱՑԵԼ, ՄՇԱԿԵԼ ԵՎ ԳՈՒՆԱՇՏԿԵԼ Է 60 ԺԱՄ ԿԻՆՈԺԱՊԱՎԵՆ,

ԹՎԱՅՆԱՑՐԵԼ ԵՎ ՄՇԱԿԵԼ Է 1500 ԺԱՄ ՏԵՍԱԵՐԻԶՆԵՐ,

ԱՐԽԻՎԱՑՐԵԼ ԵՎ ԼՐԱՑՐԵԼ Է ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐ` 6000 ԱՆՈՒՆ ՆՅՈՒԹ:



# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Է ԺԱՄԱՆԵԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻՑ ԵՎ ՏԵԽՆԻԿՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ, ՈՐՈՆՑ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է ՆՈՐ՝ 8-ՐԴ ՏԱՂԱՎԱՐԻ ԴԻԶԱՅՆԸ: ՆԱԽԱԳԻԾԸ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է 3210 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ, ՈՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ Է 1000 ՔՄ ՏԱՐԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՏՈՒԴԻԱ, ՈՐՏԵՂ ՆԿԱՐԱՀԱՆՎԵԼՈՒ ԵՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՄԵԾԱՄԱՍՇԱԲ ՆԱԽԱԳԾԵՐ: ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԵԼ ԵՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ: ԾՐԱԳՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՍԿՍԵԼ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ:





# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ





ԱՎԱՐՏԻՆ ԵՆ ՄՈՏԵՆՈՒՄ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՄԵԾ ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՏԱՂԱՎԱՐԻ՝ ԱՌԱՋԻՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ ԵՎ ՍԱՐՔԱՍՐԱՀԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ: ՍԱՐՔԱՍՐԱՀՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԵՎ ՀԱԳԵՑՎԵԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ: ԱՅՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ԱՌԱՆՁԻՆ ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ, ՈՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Է ԱՌԿԱ ՍԱՐՔԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԳՐՈՒՄՆ ՈՒ ԱՐԽԻՎԱՑՈՒՄԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԴԵՌ ՏԵՍԱԳՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՁԱՅՆԱԳՐՎՈՂ ՆՅՈՒԹԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ ԿԲԱՐՁՐԱՆԱ ԱՅՍՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ, ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿՕԳՏԱԳՈՐԾՎԻ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԸ:

ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ԱՄԲ-4 ՍԱՐՔԱՍՐԱՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԱՄԲ-7 ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԸ: ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔՈՒՄ ԵՎՍ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎՎԵԼ Է ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ:

# ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾՈՒՄ



ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ «ՇԱՆԹ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՐԶ Է ԴԱՐՁԵԼ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԻ ՉԱՓՈՒՄՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԻԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ «ԱՂՄՈՍՖԵՐ ԱՐՄԵՆԻԱՅԻ» ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ՍԽԱԼ ԵՆ ԵՎ ՈՉ ՕԲՅԵԿՏԻՎ։ ՀԱՆՐԱՅԻՆԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՍՏԵՂԾԵԼ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԿՈՄԻՏԵ, ՈՐԸ ԿՍԱՀՄԱՆԻ՝ ՀԵՌՈՒՍՏԱԼՍԱՐԱՆԻ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԸՆՏՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ։ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼ ԿՏԱ ԱՎԵԼԻ ԱՐԴԱՐ ԲԱՇԽԵԼ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿՎԵՐԱԿԱՆԳՆԵՆ ՏԱՐԲԵՐ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ։